— 1896ին Սեւանի վանքին մէջ շինել կուտայ դպրոց մը։

— Կը գնէ հարիւրամեայ հայ լրագրութեան մէկ ժողովածուն և կը նուիրէ Ս. Էջմիածնի մատենադարանին.

— Կը շինէ Թիֆլիսի մայր եկեղեցիին կրօնական թանգարանը, հիմնելով նաև իր անունով գրական մրցանակ մը.

— 1901 դեկտ. 19ին կը պատրաստէ 200,000 ռուբլիի կտակ մը ու վաւերացնել կուտայ նոտարին. նոյն կտակագիրով, ի մէջ այլոց, Ս. Յակոբի վանքին կը կտակէ հինգ հազար ռուբլի։

Կը վախճանի 1901 տարուայվերջերը, և կթղ.ին հրամանով կը թաղուի Թիֆլիսի մայր եկեղեցիին թանգարանին ներքև։ Կտակին մանրամասնութիւնները և իր կենսագրութիւնը տեսնել (Լուսաց, 1902, էջ 299—301, 304—306)։ Ս. Յակոբի վանքէն Օրինուրեան Կոնդակ դրկուած է կտակարարի այրիին և դստեր (Արձագր. Տն. Ժողովի, Նիստ ՃԼԹ. 1901, էջ 273)։

Բ

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ, ԱԱԱԹՃԻ ՁԷԼԷՊԻ.— Արքունի ժամագործապետ, որուն ազդեցութեամբ Կ. Պոլսի պտրք. ընտրուեցաւ Բաբերդցի Յովհաննէս եպս. Զամաշրճեան (1800—1801)։ Բարթուղիմէոս Ձէլէպի Յովհաննէս պտրք.ի յորդորումով՝ որուն դիմած էր Երուսաղէմի Թէոդորոս պտրք.ը, 1800 ին կը վճարէ մեծագոյն մասը Ս. Յակոբի վանքին վրայ ծանրացող պարտքին՝ որ Եգիպտացիներուն՝ Յոպպէի վրայ ըրած արշաւանքին հետեւանքովը յառաջ եկած էր. (Կոռնիկ, 1868, էջ 909)։

Գ

ԳԷՈՐԳ ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆՑ, ՋՈՒՂԱՅԵՑԻ.— Վաճառական Բաթաւիոյ մէջ (Ճաւա), որ 1827ին Ս. Յակոբի վանքին ի նպաստ, կը կտակէ 10300 կումբանի ռուփի այդ գումարին %4 տոկոսը կը գանձուի սկսեալ 1830 էն։ Հնգկայ Նուիրակ Սամուէլ վրդ.ի 1833 ին գրած նամակին համաձայն, սոյն գումարը պետական տոկոսաբեր երկու մուրհակներով, (Թիւ 6099 և 6143), 1822 և 1823 թուականներով պահ դրուած